




ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ

ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԿՈՈՐԴԻՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՄԵԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԾԵՄԻՆ

Կանխագծելով սովետական հասարակարգի վարձագման ուղիները, Վլադիմիր Իլյիչ Լենինը նշել է, որ առանց գիտության վերջին խոսքով ստեղծված տեխնիկայի անկարելի է հաջողությամբ ընթանալ դեպի կոմունիզմ: Նա համառորեն պահանջում էր, որ գիտությունը մեր երկրում չմնա մեռյալ խոսք կամ մողայիկ ֆրազ, այլ դառնա միա ու արյուն, վերածվի կենցաղի բաղադրիչ տարրի:

Առաջնորդվելով լենինյան այս ցուցումներով Սովետական Միության Կոմունիստական պարտիան գիտության և տեխնիկայի հարցերը միշտ պահում է ուշադրության կենտրոնում, որպեսզի տնտեսական և կուլտուրական շինարարությունը մեր երկրում տարվի իսկական գիտական հիմքերի վրա: Ղեկավարելով ժողովրդական տնտեսության վարձագումը, պարտիան իր ուշադրությունը կենտրոնացնում է գիտության հետազոտման վրա, որպեսզի բուռն ծաղկման պրոցեսների և տեխնիկական առաջադիմության վրա, որպես սովետական հասարակության դեպի կոմունիզմ առաջընթացի վճռական պայմաններից մեկը:

ՍՄԿԿՊ XXII համագումարը և նոր Ծրագիրը պարտիայի և սովետական ժողովրդի գլխավոր տնտեսական խնդրի՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում կարևոր դեր են հատկացրել գիտությանը, նշելով արտադրության հետ նրա օրգանական կապի, գիտության և արտադրության, բերրիայի և պրակտիկայի վարձագման միասնական պրոցեսի ստեղծման անհրաժեշտությունը:

Արտադրության հետ գիտության օրգանական կապի շնորհիվ է որ շարունակ աճում են գիտական և տեխնիկական առաջադիմության տեմպերը:

Տեխնիկական առաջադիմությունն աներևակայելի է առանց գիտության նորագույն նվաճումների կիրառման:

Գիտության առաջընթաց վարձագումը տեխնիկայի և ամբողջ ժողովրդական տնտեսության վարձագման պարտադիր և անհրաժեշտ նախադրյալն է, այն դեռում է տեխնիկական առաջադիմության ամուր հիմքերը՝ խոշոր տեղաշարժ առաջացնելով տեխնիկայում և արտադրության մեջ:

Ժամանակակից գիտությունը խորապես թափանցում է բնության գաղտնիքների մեջ: Նա հետախույզում է իրերի բնությունը, տիրելով նրանցում թաքնված ուժերին և հսկայական հնարավորություններ ստեղծելով տեխնիկական առաջադիմության բուռն վարձագման համար:

Արտադրության մեջ գիտության նորագույն նվաճումների գործնական կիրառումը գիտության հայտնագործությունները վերջին հաշվով վեր է ածում հզոր արտադրական ուժերի, նրա նոր ձևերին:

Տիրապետելով ատոմային միջուկի գաղտնիքներին, գիտությունը մարդուն հնարավորություն տվեց՝ մատերիային ստիպել բացահայտելու իր կարևոր հատկությունները և ստանալ էներգիայի նոր աղբյուր: Այսպիսով, ծնվեց նախկինում անհայտ արտադրության տիպ:

Պոլիմերների բիմիայի վարձագման շնորհիվ նոր սինթետիկ նյութերի երևան գալը և նրանց կիրառումը հեղաշրջում մտցրեց արտադրության և կենցաղի տառացիորեն բոլոր բնագավառներում:

Ժամանակակից բիմիան սկսում է ակտիվորեն ազդել և փոփոխել նույնիսկ այնպիսի, թվում էր, թե

կայուն արտադրություններ, ինչպիսիք են մետալուրգիան կամ ցեմենտի ու բետոնի արտադրությունը: Ֆիզիկայի և մաթեմատիկայի բուռն զարգացման արդյունքները ստեղծել են բոլոր հնարավորությունները արտադրության լայն ավտոմատացման համար:

Այսպիսով, եթե մի ժամանակ գիտությունը կարելի էր անվանել արտադրության «սպասուհի», ապա ներկա պայմաններում գիտությունը դարձել է արտադրության «մայրը»: ՍՄԿՊ XXII համագումարին տված իր պեկուցման մեջ ընկեր Ն. Ս. Խրոշչովը համառոտ և հստակ կերպով ձևակերպեց ժամանակակից գիտության այդ ֆունկցիան: Նա ասաց, որ «Գիտությունը ավելի ու ավելի է դառնում անմիջական արտադրական ուժ, իսկ արտադրությունը՝ ժամանակակից գիտության տեխնոլոգիական կիրառությունը»:

Սովետական հասարակության զարգացման ներկա էտապում հայրենական գիտության առջև դրված նոր, պատասխանատու խնդիրները հաջողությամբ կատարելու նպատակով կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը վերջին տարիներս մի շարք կարևոր միջոցառումներ են կենսագործել երկրում գիտության և տեխնիկայի զարգացումը ղեկավարելու սխեմներ արմատապես վերակառուցելու ուղղությամբ: Այդ կարևոր միջոցառումներից մեկն է ՍՍՌՄ Գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի, ինչպես նաև միութենական ռեսպուբլիկաների Մինիստրների սովետների այդպիսի Դետական կոմիտեների ստեղծումը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի Գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի վրա խնդիր է դրված իր գործունեությունը կենտրոնացնել ռեսպուբլիկայում գիտության ու տեխնիկայի անշեղ զարգացումն ապահովելու, դրանց նվաճումները ժողովրդական տնտեսության մեջ արմատավորելու վրա. ժողովրդական տնտեսության համար մեծ նշանակություն ունեցող կոմպլեքսային, միջնուղային և ճյուղային գիտա-տեխնիկական պրոբլեմները լուծելու վրա. գիտության և տեխնիկայի առավել հեռանկարային բնագավառների առաջընթաց զարգացումն ապահովելու նպատակով ռեսպուբլիկայում կարևորագույն գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները որոշելու վրա. նոր հայտնագործությունների ու գյուտերի հետ կապված հետազոտությունների զարգացման վրա. առաջավոր փորձը տարածելու և ժողովրդական տնտեսության մեջ այն լայնորեն կիրառելու վրա:

Սովետական Հայաստանի գիտնականներն ու մասնագետները, հանդիսանալով սովետական գիտնականների առաջավոր ջոկատներից մեկը, իրենց ավանդն են մուծում հայրենական գիտության զարգացման գործում: Գիտությունների ակադեմիայի, Ժողոտտխորհրդի, մինիստրությունների ու գերատեսչությունների ավելի քան 100 գիտական հիմնարկություններում, բուհերում աշխատում են հազարավոր գիտական աշխատակիցներ: Ռեսպուբլիկայում ավելի ու ավելի է ընդլայնվում գիտահետազոտական աշխատանքների ասպարեզը,

և զգալի հաջողություններ են ձեռք բերվել գիտության ու տեխնիկայի գնահատական ճյուղերում, ստեղծվել են գիտահետազոտական աշխատանքների խոշոր կենտրոններ, որոնք կատարում են ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի արագ զարգացմանն ուղղված կարևոր հետազոտություններ: Նկատի առնելով ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ լայնորեն արմատավորելու նպատակով գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները տարածելու խնդիրների հույժ կարևորությունը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի Գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեն սկսում է հրատարակել «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ» ամենամսյա գիտա-մասսայական պարբերականը:

Պարբերականի էջերում հրապարակվող նյութերը հիմնականում նվիրված կլինեն.

գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, արտադրության մեջ նոր տեխնիկայի արմատավորման կարևոր հարցերին.

հայրենական ու արտասահմանյան գիտության և տեխնիկայի նվաճումների, առաջավոր արտադրական փորձի, նոր հայտնագործությունների, գյուտերի և առավել արժեքավոր ռացիոնալիզատորական առաջարկությունների լայն մասսայականացմանը.

ռեսպուբլիկայում գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերի զարգացման պրոբլեմներին և ուղղություններին.

ՍՍՌՄ-ում, Հայկական ՍՍՌ-ում և արտասահմանում, գիտության և տեխնիկայի առանձին ճյուղերի զարգացման վիճակին.

գիտության և տեխնիկայի զարգացման պատմության առավել հետաքրքիր փաստերին ու նրա ակադմիկոս գործիչների կյանքին.

լույս կընծայվեն նաև գիտա-տեխնիկական հրատարակությունների վերաբերյալ բնադատական և բիրիոգրաֆիական նյութեր:

Պարբերականի էջերում հանդես կգան անվանի գիտնականներ, ինժեներներ, տեխնիկներ, արտադրության նորարարներ, գյուտարարներ, ռացիոնալիզատորներ և գիտության տարբեր ճյուղերի մասնագետներ:

Պարբերականի գլխավոր խնդիրներից մեկն է նպաստել ռեսպուբլիկայի երիտասարդությանը հայրենական և արտասահմանյան գիտության ու տեխնիկայի ժամանակակից նվաճումների հիմունքների նկատմամբ կենդանի հետաքրքրություն և ակտիվ յուրացման ոգով դաստիարակելուն:

Պարբերականի նպատակն է ինտելիգենցիայի լայն շրջաններին գիտա-տեխնիկական ինֆորմացիա տալ ժամանակակից գիտության և տեխնիկայի վերջին նվաճումների մասին. ընդլայնել բանվորների ու գյուղացիների, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների, հանրակրթական դպրոցների բարձր դասարանների ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների աշակերտների գիտական ու տեխնիկական մտահորդորներ:



8015-63

Մ Ե Զ Ո Ղ Զ ՈՒ Ն ՈՒ Մ Ե Ն

Մենք ապրում ենք տեխնիկայի աննախընթաց կարգացման դարում: Տեխնիկայի հետ փոխվում են մարդն ու մարդկային հասարակությունը: Մեր երկիրը գտնվում է սոցիալիզմից դեպի կոմունիզմ տանող ճանապարհին:

Բնական է, որ կոմունիստական հասարակության անդամներից պահանջվում են բազմակողմանի գիտելիքներ, մտնալն առ բնագիտության և տեխնիկայի բնագավառում: Գիտության մեծ և հրաշալի հայտնագործությունները այնքան արագ են հաջորդում իրար, որ գիտելիքների լրացումը դառնում է բոլորիս համար կարևոր անհրաժեշտություն:

Հարկավոր է ունենալ միջոցներ մեր բոլոր աշխատավորներին և հատկապես ինտելիգենցիային գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների մասին տեղեկացնելու համար: Այդ միջոցներից լավագույնը պետք է համարել հայերեն լեզվով գիտա-հանրամատչելի ամսագրի ստեղծումը: Յովոր սրտի մինչև այժմ այդպիսի մի ամսագիր մենք չենք ունեցել:

Ահա ինչու միայն ողջունել կարելի է ՀՍՍՌ Մինիստրների սովետի Գիտամետաղոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի Գիտատեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտի նախաձեռնությամբ՝ «Գիտություն և տեխնիկա» պարբերականի հրատարակման վերաբերյալ:

Յանկանում եմ նորաստեղծ պարբերականին հաջող աշխատանք՝ գիտական ինֆորմացիայի տարածման բնագավառում, ու փայլուն ապագա:

Վ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ,

Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
սրբ-պիղենա, ակադեմիկոս

Թող մեր նորաստեղծ ամսագիրը մեա իր բարձրության վրա և պահպանի հայ ժողովրդի ստեղծագործ ոգին:

Մ. ՍԱՐՅԱՆ

ՍՍՌԴ Ժողովրդական եկամտի, ՀՍՍՌ ԳԱ
ակադեմիկոս

Սովորաբար լուրսարևելուր նոր հրատարակվող պարբերական իր առջև որոշակի խնդիրներ և նպատակներ է դնում: Ի՞նչ կցանկանայի մեր պարբերականին—դա դժվար հարց է: Այնուամենայնիվ ինձ բավում է, որ «Գիտություն և տեխնիկա» պարբերականը հնարավորին չափ պետք է մեծ տեղ հատկացնի մայրաքաղաքի գիտական հիմնարկների և արտադրական մեծարկությունների առավել կարևորություն ունեցող աշխատանքների և նվաճումների ոչ միայն պրոպագանդան ու մասնագիտականացմանը, որն անշուշտ կարևոր է, այլև օգնի, նպաստի նրանց ներդրման գործին, որն իմարկե ավելի դժվար, սակայն ավելի պատվավոր և անհրաժեշտ աշխատանք է:

Բ. ՄՈՒՐԱՆՅԱՆ

ՀԻՊ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար

Գիտությունն ու տեխնիկան մեր օրերում առաջ են ընթանում հսկա քայլերով: Այդ պատճառով էլ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գիտության ու տեխնիկայի նվաճումների մասնագիտացումը դարձել է առաջնահերթ խնդիրներից մեկը: Այս նոր պարբերականը իր առջև պատվավոր և դժվարին նպատակ է դրել՝ մեծարկելով այդ գործի իրականացմանը:

Ես շատ ուրախ եմ, որ մեր այսուհետև մայրենի լեզվով կունենանք գիտա-մասնագիտական հանրամատչելի պարբերական: Չեմ կասկածում, որ այն առաջին իսկ համարներից մեծ մասնագիտացում կվայելի:

Բարի գալուստ մեր նոր պարբերականին:

Ա. ՄԱԿԱՐՅԱՆ,

Կիրովի անվ. գործարանի կոմունիստական
հերթափոխության վարպետ,

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ

1581-Ա.Զ.

Հայաստանի Լենինյան կոմունիստական երիտասարդական միության Կենտրոնական կոմիտեն ջերմորեն ողջունում է «Գիտություն և տեխնիկա» պարբերականի ծնունդը:

Ցանկանում ենք պարբերականին բեղմնավոր գործունեություն երիտասարդության շրջանում գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների պրոպագանդման, ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման հետագա ծավալման, աշխատանքի առաջավոր մեթոդների տարածման, ռեսպուբլիկայում տեխնիկական առաջընթացի խնդիրների լուծման ուղղությամբ:

Թող «Գիտություն և տեխնիկա» պարբերականը դառնա լուրաբանչյուր պատանու և աղջկա անբաժան ուղեկիցը, խորհրդատու բարեկամը:

ՀԼԿԵՄ ԿԵՆՏՐՈՆ

Մեր օրերում, երբ տեխնիկական առաջադիմությունը հանդիսանում է ժողովրդական տնտեսության տեխնիկական քաղաքականության անկյունաքարը, տեխնիկայի և գիտության նվաճումների մասսայականացումը դառնում է առավել կարևոր հարց: Այս ուղղությամբ «Գիտություն և տեխնիկա» նորաստեղծ պարբերականը մեծ անեփքներ ունի: Այսօր արդեն այսպիսի պարբերականի օգտակարությունը ապացուցված է ռուսերեն լեզվով հրատարակվող Նուլենաման ամսագրերի փորձով:

Իսկ երբ պարբերականը ակտիվորեն յափանցի նաև տեխնիկական առաջադիմության կազմակերպական աշխատանքի ծայրերը, օգնի վեր հանելու և անկիջում խարպանելու ժողովրդական տնտեսության այսօրվա ամենավտանգավոր իշխանուն՝ անտարբերությունն ու հանդուրժողականությունը տեխնիկական հետամնացության նկատմամբ, ապա նրա ծառայությունը կդառնա անգնահատելի:

Ողջունում են «Գիտություն և տեխնիկա»-ի ծնունդը, ցանկանում են նրան արագ հասունություն և բեղմնավոր աշխատանք:

Հ. ԳՈՎԱԾՅԱՆ

Երևանի այլումիսի գործարանի դիրեկտոր

Վաղուց անհրաժեշտություն էր դարձել ունենալ մի տպագիր օրգան, ուր գլխա-տեխնիկական հարցերը լուսաբանվեին մայրենի լեզվով: Հաճելի է նշել, որ «Գիտություն և տեխնիկա» գիտահանրամատչելի պարբերականը զալիս է լրացնելու այդ պակասը:

Ցանկալի է, որ պարբերականը հետաքրքիր հոդվածների ու բանավեճերի միջոցով բացահայտի բազմաթիվ ու բազմապիսի վիճելի հարցեր, օգնի առաջավոր փորձի փոխանակմանը, որ նրա էջերում հանդես գան արտադրության առաջավորներն ու գիտության ականավոր գործիչները, որ այն ընթերցողներին ծանոթացնի հայրենական, ինչպես նաև արտասահմանյան գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներին:

Ծնորդավորում են պարբերականի մուտքը և ցանկանում, որ նրա լուրաբանչյուր համար ջերմորեն ընդունվի ընթերցողի կողմից:

Ռ. ՕՆԱՆՅԱՆ

Վ. Ի. Լենինի անվան Հայէկէտրոգործարանի դիրեկտոր

Ցանկանում են հաջողություն նորաստեղծ «Գիտություն և տեխնիկա» պարբերականին:

Տ. ԳԵՏՐՈՅԱՆ

Շախմատի գծով աշխարհի չեմպիոն

Երիտասարդությունը գիտության է ձգտում, նա ձգտում է վեր բարձրանալ գիտության աստիճաններով, լինել անհայտ մոլորակների վրա, ներթափանցել Նյուտի տարրերի գաղտնիքների մեջ, սիրում է ճանապարհորդել, կառուցել, տիրապետել նորագույն տեխնիկային, կարգալ պատմության անհայտ էջերը: Հայաստանի երիտասարդության այդ մեծ նպատակների իրագործման օգնելու պատվավոր ու շնորհակալ գործն է կատարելու ձեր ամսագիրը: Թող այն դառնա լուրաբանչյուր հայ պատանու և աղջկա սիրելի պարբերականը, նրան տնտեսական, տեխնիկական գիտելիքներով պինդ ու միջոցը: Խմբագրության ողջ կոլեկտիվին ցանկանում ենք երիտասարդական եռանդ ու հաջողություններ:

Թող ձեր ամսագիրը մնա միշտ թարմ, նոր ու գրավիչ, ինչպես ինքը՝ գիտությունը, ինչպես ինքը՝ երիտասարդությունը:

«ԱՎԱՆԳԱՐԳ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ